

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2021 թվականի
Մեպտեմբերի 7-ին կայացած գիտխորհրդի նիստի (առցանց, նիստ հ.1.)

Օրակարգում՝

1. 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպումը ֆակուլտետում:
2. Մագիստրատուրայի 2-րդ կուրսի, ինչպես նաև որոշ առարկաների հեռավար ուսուցման անցնելու մասին: /զեկ. ՝ ծրագրի ղեկավարներ/
3. Միջազգայնացման՝ ներառյալ ակադեմիական շարժունության համար, ինչպես նաև ԱՊՀ երկրների ցանցային համալսարանների հետ կոորդինատորների ֆակուլտետի պատասխանատու նշանակելու մասին:
4. Դասախոսների վերապատրաստման մասին /«Մասնագիտության արդի հիմնախնդիրներ» դասընթացի վերաբերյալ, զեկ. ՝ Ա. Ղարագուլյան/
5. Ընթացիկ հարցեր:

Մինչ օրակարգի հարցերի քննարկումը ֆակուլտետի ղեկան՝ Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ԵՊՀ – ի գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցած Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ռեկտորատի անդամների հետ հանդիպման մասին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին, պրոֆեսորադասախոսական կազմի, առկա վակցինաներով պատվաստման և թեստավորման հարցերը:

1. Լսեցին 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման հարցը ֆակուլտետում: Ա. Բաղդասարյանը նշեց հետևյալը.
- Դեռ օգոստոս ամսից նախապատրաստական աշխատանքներ են տարվել ղեկանատի աշխատակիցների հետ,

- Անհրաժեշտ է ապահովել աշխատանքային կարգապահությունը, որը 9. 15-ից մինչև 17. 00 է, իսկ դասախոսների համար սահմանափակումներ չկան, քանի որ դասերը ավարտվում են 19. 00:
- Ֆակուլտետի աշխատակիցները պետք է անցնեն պարտադիր բուժ. զննում նշված ժամանակահատվածում:
- Ունենք պայմանավորվածություն մեծացնելու լսարանային ֆոնդը և տեխնիկապես այն հագեցնելու:
- Ժամանակին լրացնել դասամատյաններն և ուսանողների հաճախումները:
- Ապահովել լսարաններն առաջի ընթացիկ քննություններ համար(28. 10-05. 11):
- Շիրակի համալսարանը ներկայացրել է հրավեր կայանալիք գիտաժողովի, որի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ամբիոններում:

2. Քննարկվեց նաև մագիստրատուրայի 2-րդ կուրսի, ինչպես նաև որոշ առարկաների հեռավար ուսուցման անցնելու մասին հարցը: Որոշվեց որոշ առարկաների համար դիմել ԵՊՀ խորհուրդ, քանի որ նախընտրելի է նաև հիբրիդային ուսուցումը:

3. Միջազգայնացման՝ ներառյալ ակադեմիական շարժունության համար, ինչպես նաև ԱՊՀ երկրների ցանցային համալսարանների հետ կոորդինատորների ֆակուլտետի պատասխանատու նշանակելու մասին, առաջարկ եղավ ընդլայնել պատասխանատուների քանակը ըստ բնագավառների: Նախկինում այս գործընթացի պատասխանատուն եղել է Ի. Ղազարյանը:

4. Դասախոսների վերապատրաստման մասին /«Մասնագիտության արդի հիմնախնդիրներ » դասընթացի վերաբերյալ / զեկուցեց Ա. Ղարազույյանը: Նա նշեց, որ նախորդ ցիկլը երկարացվել է 2 ամսով, որը հնարավորություն է ստեղծել դասախոսներին համալրել պարտադիր


կրեդիտները, ինչպես նաև դիմեց ամբիոններին ներկայացնելու նոր ծրագիր հաջորդ վերապատրաստումների համար մինչև հոկտեմբերի 15-ը:

5. Ընթացիկ հարցերի շրջանակներում քննարկվեց ևս երկու հարց.

1. Առաջարկվեց ավարտական կուրսերից 2 թեկնածու/ փիլիսոփայության և հոգեբանության բաժիններից/ ներկայացնել անվանական կրթաթոշակ տրամադրելու համար:

2. Առ աջ ար կ վ ե ց մ եթող խորհուրդ ներկայացնել Գ. Սողոմոնյանի մենագրությունը և Դ. Սարգսյանի ձեռնարկը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

 Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան